

2021 թվականի հոկտեմբերի 2-ի ընտրություններ

Ի՛ՆՏԵՎԻՎԻՅՈՒՄ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ

Համաճարակի պայմաններում քվեարկության գործընթացն անվտանգ է: Քվեարկության շենքում նախատեսված են վարակի տարածման բոլոր կանխարգելիչ միջոցառումները:

Քվեարկությունն անցկացվում է ժամը 08:00-ից մինչև 20:00-ն



Անցե՛ք նշմարումը ստուգելու ընթացակարգը:

Քվեարկության սենյակ մտնելուց առաջ մշակե՛ք ձեր ձեռքերը մուտքի մոտ տեղադրված ձեռքերի ախտահանիչ հեղուկով:

Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին ներկայացրե՛ք ձեր անձը հաստատող փաստաթուղթը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրն ու ժամանակավորապես հանե՛ք ձեր դիմակը՝ նույնականացման նպատակներով:

Քվեարկության շենք ձեզ թույլ չի տրվի մուտք գործել և մասնակցել քվեարկությանը, եթե.

- Վրաստանի քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը ներկայացնելիս ժամանակավորապես չեք հանում դիմակը:
- Պարզվել է, որ ունեք նշմարում:

Նշմարման ստուգման ընթացակարգն անցնելուց հետո մոտեցե՛ք գրանցման սեղանին, գրանցում իրականացնողին ներկայացրե՛ք ձեր անձը հաստատող փաստաթուղթը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրն ու ժամանակավորապես հանե՛ք դիմակը:

Անցե՛ք նշմարման ընթացակարգը:

Քվեարկությանը թույլ չի տրվի մասնակցել, եթե.

- Վրաստանի քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը ներկայացնելիս ժամանակավորապես չեք հանում դիմակը:
- Հրաժարվում եք անցնել նշմարման ընթացակարգը:



Ընտրողների ցուցակում ձեր ազգանվան երկայնքով ստորագրե՛ք:

Ստորագրելու համար օգտվե՛ք գրանցում իրականացնողի սեղանի վրա դրված անհատական օգտագործման գրչից: Գաղտնի քվեախցիկում քվեաթերթիկը/ քվեաթերթիկները լրացնելիս օգտագործե՛ք նույն գրչից:

Ստացե՛ք գրանցում իրականացնողի կնիքով և ստորագրությամբ վավերացված քվեաթերթիկը / քվեաթերթիկները:

Տեսողությունը գուրկ ընտրողը քվեաթերթիկը/քվեաթերթիկները ինքնուրույն լրացնելու համար կարող է գրանցումն իրականացնողից ստանալ հատուկ շրջանակ-ձև:

Տեսողության խնդիր ունեցող ընտրողը քվեաթերթիկը/քվեաթերթիկները ինքնուրույն լրացնելու համար կարող է գրանցումն իրականացնողից ստանալ խոշորացնող ոսպնյակ:

Խուլ ընտրողը քվեարկության ընթացակարգի մասին տեղեկատվություն ստանալու համար կարող է օգտվել ժեստերի լեզվին տիրապետող օպերատորի ծառայությունից՝ ԿԸՀ-ի կայքէջում գրանցվելուց հետո:

Գաղտնի քվեախցիկում քվեաթերթիկում/քվեաթերթիկներում շրջագծե՛ք ձեզ համար ցանկալի մեկ ընտրական սուբյեկտի հերթական համարը:

Եթե չեք կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը/քվեաթերթիկները, իրավունք ունեք, ձեզ օգնելու համար, քվեախցիկ հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի և դիտորդի:

Եթե վստասել եք քվեաթերթիկը/քվեաթերթիկները կամ հատուկ ծրարը դիմե՛ք ընտրական հանձնաժողովի նախագահին, նրան փոխանցե՛ք վստասված քվեաթերթիկը և պահանջե՛ք նոր քվեաթերթիկ/քվեաթերթիկներ:



Քվեախցիկից դուրս գալուց հետո վերցրե՛ք հատուկ ծրար և մեջը դրե՛ք ծալված քվեաթերթիկը /քվեաթերթիկները:

Տեղադրե՛ք հատուկ ծրարը քվեատուփի մեջ:

Քվեարկության գործընթացում օգտագործված անհատական օգտագործման համար հատկացված գրչից թողե՛ք հատուկ տարայի մեջ:

Քվեարկությանը մասնակցելուց հետո դո՛ւրս եկեք քվեարկության շենքից:

Քվեարկության շենքից դուրս գալու ժամանակ օգտվե՛ք մուտքի մոտ տեղադրված ձեռքերի ախտահանիչ հեղուկից:

